Եվրոպական արժեքների և ինտեգրման հաղորդակցության մարտահրավերները

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Եվրոպական ինտեգրման փիղն ու հայ հասարակության կույր իմաստունները

Մարզերում երիտասարդները խիստ անտեղյակ են Հայաստանի եվրաինտեգրման գործընթացից: Երիտասարդները վստահաբար գիտեն, թերևս, երկու բան. Հայաստանը ԵՄ անդամ չէ, և եվրաինտեգրման նպատակով երկրում բարեփոխումներ են ընթանում: Ընդ որում, բարեփոխումների արդյունքներին թե՛ երիտասարդները, թե՛ հասարակությունն ընդհանրապես հիմնականում անտեղյակ են: Հատկանշական է, որ Եվրամիության հանդեպ հասարակական վերաբերմունքը ներկայում մեծապես պայմանավորված է կարծրատիպերով: Ավելին, երիտասարդները, կարծես, առանձնապես չեն էլ հետաքրքվում եվրաինտեգրման խնդիրներով. շատերը փոխում են հեռուստալիքը, ծալում են թերթը, երբ հաղորդումը կամ հոդվածը լուսաբանում է Եվրամիությանն առընչվող կամ եվրոպական ինտեգրման խնդիրները. հայաստանցիները հաճախ չեն ուզում լսել այն, ինչը փորձում են նրանց հաղորդել: Արդյունքում, եվրաինտեգրման գործընթացն ասես «լճացել» է «եվրոպական արժեքներ քարոզողի ինքնությունը կրողների» շրջանակում, խորանում է հաղորդակցության անջրպետը, իսկ հայաստանցին, որի համար ընկալելի չի Եվրոպան իր ընձեռած բոլոր հնարավորություններով ու մարտահրավերներով, գերադասում է, օրինակ, աշխատելու մեկնել երկրներ, որոնք ընկալելի ու կանխատեսելի են, ասենք՝ Ռուսաստան: Շատերը հաճախ շփոթում կամ չեն տարբերում եվրոպական մի կառույցը մյուսից, միջազգային գործընթացները՝ եվրաինտեգրման գործընթացներից, Բոլոնիայի գործընթացը ներկայացվում է, որպես ԵՄ նախաձեռնություն: Երիտասարդներից հաճախ կարելի է լսել. «եթե Երևանում ենք դժվարանում բուհ ընդունվել, Եվրոպայում չենք կարող ու չենք կարող»: Եվրոպա տանող ճանապարհը երիտասարդների ու շատ հայաստանցիների համար «անցնում է Երևանի միջով»: - Մինչդեռ եվրոպական ինտեգրման վերաբերյալ պատշաճ գիտելիքներ ունենալու դեպքում հայ երիտասարդները վստահաբար կփնտրեին և կգտնեին արտերկրում մասնագիտական կրթության այլ՝ անմիջական ուղիներ:

Այսպիսով, հայաստանցիների բացարձակ մեծամասնությունը թյուր կարծիք ունի եվրոպական կառույցների ու չափանիշների, եվրաինտեգրման նպատակների ու միջոցների, դրանց ընձեռած հնարավորությունների և դրանցից օգտվելու համար առկա խնդիրների լուծման ու մարտահրավերների մասին:

Եվրոպական ինտեգրման գործընթացի խնդիրները և եվրոպական արժեքները հայ հասարակությանը ներկայացնելը իրավամբ դժվար գործ է անգամ հաղորդակցության արդյունավետ գործիքների առկայության պարագայում: Այդ գործընթացն, ի սկզբանե, լի է հակասություններով. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում եվրաինտեգրման մարտահրավերներ, եվրոպական համայնքի անհամասեռություն և բազմատարրություն, հայ հասարակության ներսում արժեքների և շահերի բախումներ և այլն: Զարմանալի չէ, որ եվրաինտեգրման գործընթացի մասին հայաստանցիները հաճախ ունեն մեկը մյուսին տրամագծորեն հակառակ պատկերացումներ, ինչը հիշեցնում է փղի ու յոթը կույրերի մասին պատմությունը: Եվրաինտեգրման ջատագովներն անգամ երբեմն հստակ չեն պատկերացնում, թե արդյոք եվրոպական արժեքներն են պրակտիկ հարցերում առաջընթացի համար, թե պրակտիկ հարցերում առաջընթացն է կոչված արժեքներ ձևավորելու:

Վատ լեզու և խրթին մտքեր՝ ձայն բարբառոյ

Ուրեմն որո՞նք են ստեղծված իրավիճակի պատճառները: Հիմնականը, թերևս, հաղորդակցության ձևավորված մեթոդներն են. հասարակության բացարձակ մեծամասնությունը պատրաստ չէ լսելու և ընկալելու այն «լեզուն», որով իրեն ներկայացնում են եվրոպական արժեքները: Իրավամբ, հաղորդումների ու հոդվածների բովանդակությունը երիտասարդների համար հիմնականում անմատչելի է, իսկ մատուցվող նյութի լեզուն, ձևաչափը նրանց համար անհասկանալի, ուստի դրանք երիտասարդների համար անհետաքրքիր են:

Երկրորդ. թեև էլեկտրոնային ցանցերում և ինտերնետում եվրաինտեգրմանն առնչվող տեղեկությունները քիչ չեն, այդուհանդերձ, հայաստանյան հասարակության լայն շերտեր դուրս են մնում հաղորդակցության սպեկտրից, քանի որ ինտերնետը չի օգտագործվում շատերի կողմից որպես հաղորդակցության գործիք, իսկ տեղեկատվության ավանդական միջոցները արդյունավետ կերպով չեն օգտագործվում տեղեկություններ հաղորդելու և արժեքներ ներկայացնելու համար: Հայաստանցիները, թերևս, ավելի շատ վստահում են հաղորդակցության ավանդական մեթոդներին, սակայն դրանցով մատուցված նյութը գործնականում տեղ չի հասնում: Միաժամանակ, հաղորդակցության այլընտրանքային՝ նոր միջոցների հանդեպ վստահությունը համեմատաբար ցածր է, իսկ դրանցից օգտվելու հայաստանցիների կարողությունները՝ սահմանափակ:

Լրագրողների մասնագիտական անբավարար որակավորումը, անտեղյակությունը եվրաինտեգրման տերմինաբանությանը նույնպես մարտահրավեր են հաղորդակցության կազմակերպման գործում ՁԼՄ-ների

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

արդյունավետ դերակատարման համար: Ըստ էության, եվրաինտեգրման խրթին բովանդակությունը մատչելի լեզվով հասարակությանը ներկայացնող միջնորդներ գրեթե չկան:

Երրորդ. մի շարք փորձագետներ համարում են, որ եվրաինտեգրման գործընթացի տեսանելիության (visibility) ապահովման ձևավորված պրակտիկան, ըստ էության, լուծում է բացառապես եվրաչինովնիկների հաշվետվողականության շահը և հաճախ «դրոշ կախելուց այն կողմի չի անցնում», իսկ դոնորները հաճախ «փչացնում» են հաղորդակցության առանց այն էլ խոցելի մեթոդները՝ պատվիրելով հաղորդումներ ու ընտրելով դրանց բովանդակությունն ու ձևաչափը սեփական հայեցողությամբ, առանց ուշադրություն դարձնելու այն իրողությանը, որ դրանք հայաստանցիների համար հիմնականում գրավիչ չեն:

Բովանդակության և ձևի ներդաշնակության խաչմերուկում

Անհրաժեշտ է հասարակական լայն քննարկում ծավալել եվրաինտեգրման գործընթացի արդյունքների, կարգավորման ու ընթացակարգերի, եվրոպական չափանիշների ներդրման շահեկանության և ակնկալվող օգտակար փոփոխությունների վերաբերյալ: Չէ՞ որ շատերը տեղյակ էլ չեն, որ ասենք, հյութերի վրա հայալեզու մանրակրկիտ բացատրությունները հենց եվրոպական չափանիշների ներդրման արդյունք է: Այս առումով, կարևոր են արդյունավետ ձևաչափով հասարակական քննարկումները, որոնց արդյունքում պրակտիկ, կենցաղային խնդիրների շուրջ երկկողմանի, ինտերակտիվ հաղորդակցություն կձևավորվի եվրաինտեգրման պատասխանատուների և հասարակության անդամների միջև: Այս կերպ հնարավոր է իրազեկման պահանջարկ ձևավորել. հայաստանցիները պիտի զգան տեղեկատվության կարիքն ու անհրաժեշտությունը:

Քննարկումները պիտի կարողանան առաջին հերթին կամրջել հաղորդակցության ձևաչափի ու բովանդակության անդունդը՝ փորձագիտական շարադրանքի և հասարակ քաղաքացու համար պարզ ու ընկալելի ձևակերպումների միջև բացը: Հետևաբար քննարկումները պիտի լինեն միջնորդավորված և պրակտիկ մեթոդների վրա հիմնված: Շեշտը դնելով հաղորդակցության ինտերակտիվ ու հետաքրքրական ձևաչափերի վրա՝ դրանք պիտի փոխկապակցել առանձին թիրախ խմբերին հուզող խնդիրներին ու օրակարգին: - Հաղորդակցությունը պիտի լինի խիստ հասցեական և հաշվի առնի լսարանի կարիքները. ողջ հանրությանն ուղղված ընդհանրական մոտեցումն այս հարցում չի գործում: Ավելին, հաղորդակցությունը պիտի հիմնվի ոչ թե մարդկանց հետաքրքրություններից հեռու վերացական հասկացությունների, այլ պրակտիկ տեղեկատվության վրա: Հայաստանցուն հարկ է հնարավորություն տալ հասկանալու, թե իր կյանքի վրա ինչ ազդեցություն է ունենում ինտեգրումը: Ընդ որում, անհրաժեշտ է բացահայտել հաղորդակցության այն մեթոդներն ու միջոցները, որոնց հատկապես վստահում են հայաստանցիները կամ առանձին խմբերը՝ հատուկ ուշադրություն դարձնելով զանգվածային լրատվության էլեկտրոնային միջոցներին: Միաժամանակ, հաղորդակցությունը պիտի առաջին հերթին ուղղել բացասական ու խանգարող կարծրատիպերի վերացմանը:

Իրավամբ, հաղորդակցության գործընթացում կենտրոնական ու որոշիչ դեր ունեն միջնորդները: - Մասնավորապես, եվրոպական արժեքների արմատավորման գործում խիստ կարևոր է ուսուցիչի դերը. հենց ուսուցիչն է աշխատում երեխայի հետ: Հարկավոր է եվրոպական արժեքների արմատավորման գործում կրթել ու զինակից դարձնել առաջին հերթին ուսուցչին, լրագրողին, ոստիկանին՝ որպես միջնորդների, չանտեսելով, իհարկե, ներգրավել հանրային կարծիք ձևավորողներին: Անհրաժեշտ է երեխաներին դիտել ոչ միայն որպես հաղորդակցության թիրախ, այլև կարևորագույն միջնորդ. երեխաները սովորում են անհամեմատ արագ և հաղորդակցվում են ավելի արդյունավետ ու սովորեցնում են իրենց ընտանիքներին: Ավելին, հինգ տարի անց հենց այսօրվա երեխաներն են դառնալու հաղորդակցության կարևորագույն դերակատարները:

Կարևորվում է նաև հաղորդակցության գործընթացում մասնագիտական ներուժի պատշաճ ներգրավման հրամայականը: Այսպես, այն հասարակական կազմակերպությունները, որոնց առաքելությունն է հայ հասարակության շրջանում եվրոպական արժեքների տարածումը և որոնք ստանձնել են հաղորդակցության միջնորդի ուրույն դեր, պիտի սերտորեն համագործակցեն հանրության հետ կապերի մասնագետների հետ:

Եվրոպական արժեքների և եվրաինտեգրման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության ընդհանուր միջավայրի բարելավմանը կնպաստի Հայաստանում ինտերնետային հասանելության ընդարձակումը, երիտասարդներին համապատասխան ինտերնետային կարողություններ՝ տեղեկատվություն փնտրելու հմտություններ հաղորդելը, սակայն ամենից առաջ՝ պատասխաններ փնտրելու կարիքի ու հրատապության ձևավորումը: Սրան կարելի է հասնել, օրինակ, ՀՀ մարզերում շարքային քաղաքացիների համար հասանելի ԵՄ տեղեկատվական ներկայությունն ապահովելու միջոցով. գրադարանների, եվրաինտեգրման խնդիրներով հետաքրքրվողների համար Wi-Fi ազատ գոտիների ստեղծման, տեղեկատվական կրպակների և հասանելության ու մատչելիության այլ լուծումներով:

Ընդհանուր առմամբ, եվրոպական արժեքների արդյունավետ ներկայացման համար հարկ է հընթացս ձևավորել հաղորդակցության արդյունավետ մեխանիզմներ: Առկա կարծրատիպերի պայմաններում անհրաժեշտ է միաժամանակ և՛ փորել հաղորդակցության թունելը, և՛ անցնել դրանով:

Համառոտագիրը մշակվել է 2011թ-ի նոյեմբերի 22-ին կայացած՝ «Հաղորդակցություն եվրոպական արժեքների շուրջ» վերնագրով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա:

Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ: Քննարկումը կազմակերպվել էր «Սևծովյան տարածաշրջանի խաղաղաշինական ցանցի» աջակցությամբ: